Մանկական սնուցման որակական հետազոտություն Հայաստանում

ՀԱՀ հանրային առողջապահության ֆակուլտետ

Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոն

Հետազոտող խումբ:

Ա. Դեմիրճյան
Ծ. Մելքոմ Մելքոմյան
Կ. Մնացականյան
Վ. Պետրոսյան

American University of Armenia

Մայիս, 2015

unicef

Հետազոտության նպատակները

- Պարզել տարբեր շահառուների ընկալումները, մոտեցումներն ու գործելակերպը հղի կանանց և մանկահասակ երեխաների սնուցման վերաբերյալ Հայաստանում
- Ուսումնասիրել հղի կանանց և երեխաների առողջ սնուցումը խոչընդոտող գործոնները ընտանեկան և համակարգային մակարդակներում
- Պարզել այդ խոչընդոտները հաղթահարելու ուղիները

Մեթոդները

- Առկա փաստաթղթերի և գրականության ուսումնասիրություն
- Որակական հետազոտություն՝
  - Փորձագետների հետ խորացված հարցազրույցների (ԽՀ) և
  - Բուժաշխատողների ու մայրերի հետ խմբային քննարկումների (ԽՔ) միջոցով՝
    - Երևանում
    - Լոռում (Վանձոր և մի գյուղ) և
    - Շիրակում (Արթիկ և մի գյուղ)

Տվյալների հավաքագրում

- Փետրվար – ապրիլ, 2015
- 8 խորացված հարցազրույց (ԱՆ, ԱՀԿ, ՀՀ ԱԺ ներկայացուցիչների հետ[k])
- 13 խմբային քննարկում
  - Մինչև 5 տ. երեխաների մայրերի[m] (4)
  - Առաջնային օղակի մանկաբույժների[p] (3)
  - Առաջնային օղակի մանկաբարձ-գինեկոլոգների[o] (2)
  - Ծննդատների անձնակազմի[o], [p] (2) և
  - Գուղական բուժքույրերի[n] (2) հետ
- Ընդամենը, 99 մասնակից Երևանից (33), Շիրակից (22) և Լոռուց (44)

Սնուցում և խնամք հղիության ընթացքում

<u>Առկա գործելակերպեր</u>

- Հղիության ընթացքում աշխատում են սնվել «առողջ»
- «Առողջը» մեկնաբանվում է տարբեր կերպ
  - *Հղիության ընթացքում պետք է խուսափել տապակած կարտոֆիլ, միս, ցիտրուցներ պարունակող սննդից:* [m]
  - *Ես չէի ասի, թե ինչ-որ բան կար, որ չեմ կերել: Ամեն ինչից՝ քիչ-քիչ:* [m]
  - *Ես ավելացրել են մրգերի ու ջրի քանակը:* [m]
- Վիտամինների ընդունում հղիության ընթացքում (նշանակմամբ կամ առանց նշանակման)
  - Ca-ի հավելումների ընդունում (հատկապես՝ գյուղերում)
  - Ֆոլաթթվի ընդունում պահանջվածից ուշ ժամկետում՝ նախքան հղիությունը կոնսուլտացիա չդիմելու պատճառով

Սնուցում և խնամք հղիության ընթացքում

<u>Հիմնական խնդիրները</u>

- Հղիության ընթացքում կնոջ ճիշտ սննդակարգի վերաբերյալ ոչ մի կամ թերի խորհրդատվություն կանանց կոնսուլտացիաներում
- Հղիության ընթացքում սննդային հավելումների նշանակման միասնական ուղեցույցի բացակայություն, որը բերում է այլաբնույթ գործելակերպերի
  - *ԱՆ-ի պահանջն է բոլոր կանանց նշանակել ֆոլաթթու, յոդմարին և կալցիում: Մենք նշանակում ենք կալցիումի հավելումներ հղիության 20-22-րդ շաբաթից...* [օ]
  - *Մենք կալցիումի հաբեր ենք նշանակում, երբ դրա կարիքը կա...* [օ]
- Հղիության ընթացքում կրծքով կերակրելուն չնախապատրաստում կամ սխալ նախապատրաստում
  - *...նրանք պետք է խավոտ սրբիչով շփեն պտուկները [հղիության ընթացքում], որ ճաքեր չունենան* [հետագայում].[օ]
- Մայրական դպրոցների անբավարար քանակ

Նորածնի խնամք և կրծքով սնուցման սկիզբ

<u>Առկա գործելակերպեր</u>

- Հետծննդյան առկա գործելակերպերի մասին ծննդատների աշխատողների կարծիքը հակադրվում է մայրերի և մանկաբույժների կարծիքին
- Վաղ մաշկային շփում և կրծքին վաղ մոտեցում գյուղական վայրերում, մինչդեռ Երևանի ծննդատներում՝ հաճախ կրծքին ուշ մոտեցում և կաթնախառնուրդների օգտագործում
  - *Ծննդատներում սովորաբար խախտվում է ծննդից անմիջապես հետո մաշկային շփման ապահովումն ու կրծքին մոտեցնելը:* [k]
  - *... բուժաշխատողները երեխաներին հանգստացնելու համար կաթնախառնուրդ են տալիս, փոխանակ օգնեն, որ մայրերը կերակրեն իրենց երեխաներին:* [k]
- Շշերի և ծծակների տարածված օգտագործում ծննդատներում
  - *...ծծակները տալիս են, որ երեխաներին արագ լռեցնեն:* [k]

Նորածնի խնամք և կրծքով սնուցման սկիզբ

<u>Հիմնական խնդիրները</u>

- Անբավարար աջակցություն կրծքով սնուցմանը ծննդատներում
  - *Նրանք ուղղակի երեխային տվեցին ինձ ու ասացին, որ կերակրեմ:* [m]
  - *Ծննդատներում բավականաչափ չեն օգնում. ... Պետք է փորձված մեկը լինի կողքիդ, որ քեզ անկացնի դրա միջով: Մորը պիտի օգնեն առաջին կերակրումների ժամանակ...* [p]
  - *Ծննդատներում ոչ մեկին չի հետաքրքրում ոչ կուրծք տալը, ոչ կրծքերի վիճակը, ոչ էլ թե երեխան ինչ է կուրծքը բռնում:* [m]
    - Կաթնախառնուրդների տարածված օգտագործում՝ մինչև իսկ մայրերի կամքին հակառակ
      - ...[կաթնախառնուրդ] *տալիս են իրենց գործը հեշտացնելու համար:* [m]
      - *...այդ խնդիրներն ավելի հաճախակի են Երևանի ծննդատներում, քանի որ դրանցից շատերը սերտ կապերի մեջ են տարբեր դեղագործական ընկերությունների հետ, որոնք խրախուսում են կաթնախառնուրդների կիրառումն այնտեղ...* [k]

Կրծքով սնուցում և լրացուցիչ սնուցում

<u>Առկա գործելակերպեր</u>

- Մանկան ճիշտ սնուցման մասին տարածված իմացություն
  - *Բացառապես կրծքով կերակրում մինչև 6 ամսական հասակը... Ցանկալի է կրծքով կերակրումը շարունակել մինչև երեխան դառնա 2 տարեկան:* [n]
- Ջրի տարածված ներմուծում առաջին ամիսներին
  - *Բոլոր եղանակներին էլ ես ասում եմ, որ ջուր տան: Եթե երեխան դրա կարիքն ունի՝ կխմի: ... Կարող է դրսում ձմեռ լինի, բայց տանը՝ 34°C տաքություն... իհարկե ջրի կարիք կլինի:* [p]
  - *Իմը սովորական ջուր չէր խմում... Ստիպված քաղցրացնում էի, որ խմի.* [m]
- Հաճախ՝ հեղուկների ու հավելյալ սննդի վաղ ներմուծում (մոտ 4 ամսականից)
- Հաճախ՝ ըստ պահանջի կրծքով կերակրում

Կրծքով սնուցում և լրացուցիչ սնուցում

<u>Հիմնական խնդիրները</u>

- Բացառապես կրծքով սնուցման շատ կարճ տևողություն՝ ջրի վաղ ներմուծման պատճառով
- Կրծքի մոտ երեխայի ճիշտ դիրքի և կուրծքը ճիշտ բռնելու հարցում անբավարար օգնություն՝ բխող հետևանքներով
  - *Հենց որ ասացի բժշկին պտուկներիս ճաքերի մասին՝ ինձ դեղ նշանակեց, նույնիսկ առանց ճաքերը տեսնելու:* [m]
  - [Հարկավոր է] *բացատրել, թե ինչպես պետք է երեխային ճիշտ մոտեցնել կրծքին, որ հետո խնդիրներ չառաջանան:* [m]
    - Կրծքի կաթի թվացող անբավարարությունը՝ խառը կամ արհեստական սնուցման անցնելու հիմնական պատճառ
    - Գյուղական վայրերում կրծքի կաթը փոխարինում են կովի կաթով՝ նյութական և ընտանեկան պատճառներով
      - *Թե՛ ավանդական, թե՛ ֆինանսական առումով կովի կաթն ավելի ընդունելի է մարդկանց համար:* [p]

Հավելյալ սնուցում

<u>Առկա գործելակերպեր</u>

- Հավելյալ սնուցման ներմուծման տարիքը տատանվում է 3-10 ամսականի միջև (հիմնականում՝ 5-6 ամսականում)
  - *5 ամսականից մայրերը սկսում են ընտանեկան սեղանից սնունդ տալ երեխային՝ մեզ հետ խորհրդակցելուց հետո:* [p]
  - *Ես 4 ամսականից պատրաստատի շիլաներ եմ տվել իմ երեխային, բայց քիչ քանակով …* [m]
- Առաջին հավելյալ սնունդը սովորաբար մրգի կամ բանջարեղենի պյուրեներ են կամ շիլաներ՝ աստիճանաբար ներմուծվող
- Միսը հիմնականում ներմուծվում է 6-10 ամսականում՝ սկսելով տավարի մսից կամ արգանակից
- Հավելյալ սննդի ընտրության հարցում գյուղի մայրերն ավելի շատ վստահում են ընտանեկան ավանդույթներին, իսկ քաղաքի մայրերը՝ ինտերնետին և բժշկի խորհրդին

Հավելյալ սնուցում

<u>Հիմնական խնդիրները</u>

- Հավելյալ սնուցման տարբեր գործելակերպեր
  - *...մենք հավելյալ սնուցման վերաբերյալ որևէ ուղեցույց չունենք: Եթե տարբեր տեղամասերից 10 մանկաբույժ հավաքեք ու նրանց հարցնեք հավելյալ սնուցման ճիշտ կարգի մասին՝ բոլորը կպատասխանեն տարբեր կերպ:* [k]
- 6 ամսականից վաղ հավելյալ սնուցման ներմուծման միտում
  - *Բժիշկն ինձ ասաց, որ ոչինչ չտամ մինչև 4-5 ամսականը, բայց ես տվեցի, որովհետև կաթս քիչ էր և երեխան քաղցած էր մնում:* [m]

- Երկաթով հարուստ սննդի վերաբերյալ գիտելիքի պակաս
  - *Ես մի քիչ քերած խնձոր տվեցի, հետո՝ շատ բանան: Ես որոշեցի, որ դրանք երկաթի լավ աղբյուրներ են...* [m]

1-5 տարեկան երեխայի սնուցում

Առկա գործելակերպեր

- Մանկաբույժները խորհուրդ են տալիս, որ 1-5 տ. երեխան ճաշի 4-5 անգամ
- Մայրերն ասում են, որ երեխան ճաշում է օրը 3-4 անգամ (որից 3-ը՝ հաճախ մանկապարտեզում)
  - *…նա երեք անգամ է ուտում* [մանկապարտեզում] *և մի անգամ էլ՝ տանը: Այսինքն, 4 անգամ ճաշում է:*[m]
    - Մանկապարտեզ հաճախող երեխաների մայրերը հիմնականում հենվում են մանկապարտեզի սննդի վրա՝ հաճախ չիմանալով, թե այն ինչպիսին է:
      - *Սննդի որակը, սննդարարությունը, անվտանգությունը և պատրաստման եղանակը նախադպրոցական հաստատություններում շատ կարևոր են:* [k]

1-5 տարեկան երեխայի սնուցում

<u>Հիմնական խնդիրները</u>

- Ծնողներից քչերն են նշում երեխային բազմազան սնունդ տալու կարևորությունը
- Երեխաները, հատկապես՝ մանկապարտեզ հաճախող, ավելի քիչ են ճաշում, քան խորհուրդ է տրվում:
- Անհրաժեշտ է ավելի լավ վերահսկել մանկապարտեզ-ներում տրվող սննդի որակն ու պատրաստումը
- Բուժաշխատողները ծնողներին խորհուրդներ չեն տալիս 1-5 տարեկան երեխայի ճիշտ սնուցման վերաբերյալ
- Որոշ ծնողներ անհամապատասխան որակի սննդամթերք են տալիսերեխաներին:
  - *Հիմնականում սննդի որակն ու քանակն են լինում անհամապատասխան ու միօրինակ՝ ցածրորակ երշիկներ, չիպսեր, ու կոլա:* [k]

Երեխայի աճի հսկողություն

<u>Առկա գործելակերպեր</u>

- Մինչև 1 տ. երեխաների աճը հսկվում է համատարած
- Բոլոր 5 աճի կորագծերը միանման լիարժեք չեն լրացվում
  - *Նրանք չեն լրացնում «քաշի ինդեքս՝ ըստ տարիքի» կորագիծը :* [k]
- Բուժաշխատողները ոչ միշտ են ճիշտ մեկնաբանում աճի կորագծերը
  - *Երբեմն նրանք լրացնում են քաշի կորագծերը, բայց չեն կարողանում ճիշտ մեկնաբանել կամ խորհուրդներ տալ:* [k]
- 1տ.-ից հետո աճի կորագծերը լրացվում են ավելի սակավ և ավելի քիչ կանոնավոր, հատկապես գյուղական վայրերում
  - *Ես պիտի խոստովանեմ, որ մենք չենք անում դա նույն մանրակրկիտությամբ, ինչ-որ փոքրիկների համար.* [p]
- Առաջնային օղակի բուժաշխատողների համար աճի շեղումների բուժման ուղեցույց չկա

Երեխայի աճի հսկողություն

<u>Հիմնական խնդիրները</u>

- Բուժաշխատողները ծանրաբեռնված են թղթագրությամբ, և չեն կարողանում լրացնել աճի կորագծերն ինչպես հարկն է
  - *…վերջին 10 տարվա ընթացքում թղթագրությունն ավելացել է և բուժաշխատողները պահանջվող թղթերը լրացնելու ժամանակ չունեն:* [k]
- Բուժաշխատողները թերագնահատում են աճի կորագծերի լրացման կարևորությունը, հատկապես՝ ավագ հասակի երեխաների համար
  - *Երբ առողջական խնդիրներ են ունենում, մենք* [երեխաներին] *բերում ենք* [բժշկի մոտ]. *Բայց էդ դեպքում էլ պիտի խնդրենք, որ կշռեն, թե չէ չեն կշռի:* [m]
- Ծնողները 1-5 տարեկան երեխաներին չեն բերում բժշկի՝ աճի հսկողության համար
  - *…Ծնողները չեն գիտակցում այդ չափումների կարևորությունը: Նույնը՝ որոշ բժիշկներ:* [k]
- Ավագ երեխաների աճի հսկողության համար սարքերը չեն բավարարում

Անեմիա և այլուրի հարստացում

<u>Առկա գործելակերպեր</u>

- Ըստ մանկաբույժների և քաղաքաբնակ մայրերի՝ անեմիայի հսկողությունը 9 ամսականում կատարվում է համատարած
  - *Երեխաների ընդգրկումը անեմիայի սկրինինգով շատ բարձր է, քանի որ դա մտնում է բոնուսային համակարգի մեջ.* [k]
- Ըստ գյուղաբնակ մայրերի՝ երեխաները չեն հսկվում անեմիայի համար և իրենք չգիտեին, որ դա պետք է արվի
- Անեմիայի տարածվածությունը հղի կանանց շրջանում համարվում է ցածր
  - *...ներկայումս մենք լուրջ անեմիաներ չունենք* [կանանց շրջանում]: *... անեմիայով մայրերի տոկոսը շատ ցածր է, որովհետև մենք կանխարգելիչ քայլեր ենք ձեռնարկում՝ նախքան նրանց ծննդաբերելը:* [k]
    - Թե՛ երեխաները, թե՛ հղի կանայք երկաթի պրեպարատներ են ստանում միայն բուժման նպատակով
  - *Կատարվում է անեմիայի սկրինինգ և դրական արդյունքի դեպքում բուժաշխատողները փորձում են շտկել այն դիետայի միջոցով , նաև նշանակում են երկաթ:* [k]

Անեմիա և ալյուրի հարստացում

<u>Հիմնական խնդիրները</u>

- Առաջնային մակարդակում չկա անեմիայի պատճառի պարզաբանման տեստերի հնարավորություն
  - *Եթե լաբորատորիան որոշեր ֆերրիտինը, թե՛ բուժման արժեքը կիջներ, թե՛ երեխային վնաս չէինք պատճառի* [երկաթ նշանակելով].[p]
- Բնակչության վատ տեղեկացվածություն անեմիայի և ալյուրի հարստացման ծրագրի մասին, հատկապես՝ գյուղական վայրերում
- Փորձագետները կողմ էին ալյուրի հարստացմանը, իսկ խմբային քննարկումների մասնակիցները՝ դեմ
  - *...ավելի լավ է* [առկա կարիքը] *ապահովել սննդի միջոցով, որը պարունակում է երկաթ և ֆոլաթթու:*[p]
- Հիմնական մտահոգությունը երկաթի գերդոզավորումն է և ցածրորակ հարստացուցիչների օգտագործման կողմնակի ազդեցությունները
  - *Հայերը հիմնականում շատ հաց են ուտում և այդ պատճառով կարող է լինել գերդոզավորում:*[p]

Ծնողների խորհրդատվություն

- Հղի կանանց և մայրերի խորհրդատվությունն անբավարար է
  - *Բուժաշխատողները* [կանանց կոնսուլտացիաներում] *երբեք չեն տալիս որևէ խորհուրդ սննդի վերաբերյալ:* [m]
  - *Ես խնդիր ունեմ բժիշկների հետ՝ նրանք չեն խոսում: Դու տանում ես երեխային բժշկի մոտ, նրանք ստուգում են քաշը, հասակը, սիրտը և այլն, ու վերջ: Ոչ խոսակցություն կա, ոչ բացատրություն, ոչինչ:* [m]
- Հիմնական պատճառները՝ ծանրաբեռնվածություն հիվանդների հոսքով կամ թղթագրությամբ և հմտությունների բացակայություն
  - *Բուժաշխատողներն ավելի զբաղված են թղթեր լրացնելով, քան հիվանդին խորհուրդ տալով:* [k]
  - *...այդ անընդմեջ թղթագրության պատճառով նրանք կորցրել են խորհրդատվության իրենց հմտությունները:* [k]

Խորհուրդներին չհետևելու պատճառները

- Ի վիճակի չլինելը ֆինանսական պատճառներով
  - *Կովի կաթն ավելի հաճախ տալիս են ֆինանսական պատճառներով. ...սկսում են առաջարկված կաթնախառնուրդից, բայց հետո անցնում են կովի կաթի, քանի որ գումար չունեն:* [p]
- Նշանակման պատճառը չհասկանալը
  - *Եթե նրանք մի բան են նշանակում և դու հարցնում ես, նրանք ասում են քեզ: Բայց ստիպված ես հարցնել... Իրենք չեն բացատրի:* [m]
  - *Նրանք չեն ասում ինչու, ուղղակի ասում են, որ դա ընդունես: Եթե բացատրեին, մենք երևի ավելի լավ հետևեինք նշանակումներին:* [m]
- Հակասող խորհուրդներ ստանալը տարբեր կողմերից (բժիշկ, ընտանիքի ավագ անդամ, հարևան, ինտերնետ)

Տեղեկացվածության մակարդակ

- Հղի կանանց սննդային կարիքների մասին գիտելիքների պակաս թե՛ բուժաշխատողների, թե՛ կանանց շրջանում
  - *...բուժաշխատողները չունեն հիմնական գիտելիք՝ բավարար խորհուրդներ տալու համար* [հղի կանանց]: [k]
- Գործելակերպի բազմազանություն՝ վատ տեղեկացվածության պատճառով
  - *... բուժաշխատողները մայրերին նշանակում են հավելումներ, որի կարիքը նրանք չունեն, օրինակ՝ յոդ...* [k]
- Վատ տեղեկացվածություն կրծքով սնուցման և հավելյալ սնուցման գործնական կողմին
  - *...սկզբից մենք դրա մասին չգիտեինք* [կրծքին ճիշտ մոտեցնել], *բայց հետո սովորեցինք մեր մայրերից ու սկեսուրներից* [m]
  - *Իմ երեխան ալերգիկ է և չի ընդունում կովի կաթը: Ես կարծում էի, որ եթե սկսեմ ավելի վաղ տալ այն, օրգանիզմը կսովորի ու կսկսի ընդունել, բայց իրականում այդպես չի լինում:* [m]

Տեղեկատվության աղբյուրներ

- Բուժաշխատողների համար՝ սեմինարներ, հատուկ հեռուստահաղորդումներ, ինտերնետ
  - *Մենք սեմինարներ ունենք, որի ժամանակ սովորում ենք մանկական սնուցման մասին :* [n]
  - *…Ես շատ նոր տեղեկություններ եմ ստանում «Հայ մայրիկ» հեռուստահաղորդումից:* [n]
  - *…մեր լիցենզավորման կուրսերից,… նաև օգտվում ենք ինտերնետից:* [p]
- Մայրերի համար: հեռուստահաղորդումներ, ինտերնետ, հարազատներ, ընկերներ, բժիշկներ
  - *Ես սովորել եմ քրոջիցս և իմ սեփական փորձից:* [m]
  - *Ես սովորել եմ նաև «Հայ մայրիկ» հաղորդումից, բայց մեծ մասամբ՝ ինտերնետից:* [m]
  - …[սովորում ենք] *մայրերից ու սկեսուրներից…* [m]
- Թե՛ գյուղական, թե՛ քաղաքային վայրերում բուժաշխատողների դերը որպես տեղեկատվության աղբյուր մեծ չէ: Պատճառները՝ *անբավարար խորհրդատվություն, վստահության պակաս…*

Մասնակիցների առաջարկները

- Խոցելի ընտանիքների կանանց և երեխաներին տրամադրել նյութական և սննդային օգնություն
- Խրախուսել կրծքով սնուցմանը նպաստող գործելակերպերը և դադարեցնել դրան վնասող վարվելակերպերը ծննդատներում
- Մշակել և կիրառել հղի կնոջ և երեխայի սնուցման միասնական ստանդարտներ և ուղեցույցներ
- Բարձրացնել բուժաշխատողների գիտելիքներն ու տրամադրվածությունը՝ իրականացնելու հղի կանանց և երեխաների սնուցման լիարժեք խորհրդատվություն

Ընտիրա-կալություն